



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ. Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 234-Ա

ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի ԹԻՎ 54  
ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ 1-Ը ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 20 որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2019 թվականի մարտի 11-ի N 01 /08.2/1089-2019 գրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Գլաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 3-ի՝ «Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային ու ատեստավորման հանձնաժողովների կազմը, հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման համար լիազորված անձ նշանակելու մասին» թիվ 54 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 14  
Գլաձոր համայնք

